

Շոկոլադ

Էմիլը շատ է սիրում լուծել օլիմպիական խնդիրներ տարբեր կայքերում: Նա նաև շոկոլադ է սիրում: Էմիլը կարծում է, որ շոկոլադ ուտելն իրեն օգնում է լավ մտածել և բարդ խնդիրներ լուծել:

Էմիլի ծնողներն իրենց տղային ամեն օր որոշակի գումար են տալիս դպրոց գնալիս: Էմիլը ամեն կիրակի գնում է խանութ և իր մոտ եղած գումարով գնում է այնքան շոկոլադե սալիկ, որքան հնարավոր է: Ամեն անգամ նա գնում է միայն մեկ տեսակի շոկոլադ: Մնացորդը մնում է հաջորդ շաբաթվա համար: Բայց շոկոլադի գները փոփոխվում են:

Պահանջվում է գրել ծրագիր, պարզելում համար, թե N շաբաթների ընթացքում Էմիլը քանի շոկոլադե սալիկ է գնել:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված է շաբաթների N ($1 \leq N \leq 1000$) քանակը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրում տրված է երկու բնական, 10^9 -ին չգերազանցող a և b թվեր: Առաջին թիվը ցույց է տալիս հերթական շաբաթվա ընթացքում Էմիլի ստացած գումարը, երկրորդ թիվը ցույց է տալիս կիրակի օրը խանութում Էմիլին հետաքրքրող շոկոլադի մեկ սալիկի արժեքը:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ թիվ՝ շոկոլադե սալիկների քանակը, որ Էմիլը կգնի N շաբաթների ընթացքում:

Օրինակ

Մուտք	Ելք
3 10 3 11 5 7 4	7

Թեստերի 50 տոկոսում $a, b \leq 1000$: